ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 6 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դ. Ավետիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի փետրվարի 7-ին Բրյուսելում եւ 2006 թվականի ապրիլի 3-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետա-

զոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Շրջանակային համաձայնագիրն ստորագրվել է 2006 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում եւ 2006 թվականի ապրիլի 3-ին՝ Երեւանում: Համաձայնագրի նպատակն է փոխարինել ՏԱՍԻՍ-ի 1996 թվականի ծրագրի ֆինանսավորման հուշագրի բաղկացուցիչ մաս կազմող «Ֆինանսավորման հուշագրի համար կիրառելի ընդհանուր կանոնները» (ՀՀ ԱԺ-ն վավերացրել է 22.04.1998թ.): Այդ կանոնները Հանձնաժողովի եւ Հայաստանի միջեւ ստորագրվել է 1994 թվականի փետրվարի 3-ին՝ Բրյուսելում:

2. Համաձայնագրում նախատեսվում են Համայնքի ֆինանսավորմամբ կատարվող գործողությունների ներկայացման համար կիրառելի կանոններին առնչվող դրույթներ, որոնք վերաբերում են, մասնավորապես, արտարժույթի փոխանակմանը, հարկային եւ մաքսային պարտավորություններին:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

ա/ տրամադրել արտարժույթ ներմուծելու եւ ձեռք բերելու թույլտվություն,

բ/ ծրագրի շրջանակներում առաքելության փորձագետներին եւ նրանց ընտանիքների անդամներին թույլատրել ներմուծել եւ պահել արտարժույթ, ինչպես նաեւ արտահանել արտարժույթի չօգտագործված մնացորդը,

գ/ երաշխավորել, որ համապատասխան ներմուծումները կմաքսազերծվեն սահմանված ժամկետներում,

դ/ Համայնքի ֆինանսավորմամբ նախատեսվող պայմանագրերին համապատասխան՝ կապալառուներին եւ նրանց աշխատողներին (բացառությամբ ՀՀ քաղաքացիների կամ մշտական ռեզիդենտների) ազատել բոլոր տեսակի հարկերից, տուրքերից եւ պարտադիր վճարներից,

ե/ նշված պայմանագրերի շրջանակներում աշխատող ֆիզիկական անձանց ազատել անձնական եւ կենցաղային ապրանքների, ներառյալ սննդամթերքի, ինչպես նաեւ մեկ ավտոմեքենայի ներմուծման վճարներից,

զ/ Հանձնաժողովին տրամադրել համաձայնագրի կիրառմանը վերաբերող ամբողջ տեղեկատվությունը :

Համաձայնագրի իրականացման եւ մեկնաբանման հետ կապված վեճերը լուծելիս նախապատվությունը տրվում է բանակցություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2006 թվականի փետրվարի 7-ին Բրյուսելում եւ 2006 թվականի ապրիլի 3-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 մարտի 2007 թվականի
ՍԴՈ-681